600.0438.28.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբերի 2016 թվականի №438Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի №376Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) սույն թվականի սեպտեմբերի 22-ի, նոյեմբերի 29–ի և դեկտեմբերի 15-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ ավարտել է «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները և խնդրում է համապատասխան փոփոխություններ կատարել ԼԷ №0560 լիցենզիայի պայմաններում՝ ամրագրելով փաստացի տեղակայված հզորությունը և հիդրոագրեգատների տվյալները,

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն՝ 2016 թվականի նոյեմբերի 22-ին տեղի է ունեցել Ընկերության մասնակցի փոփոխության գրանցում՝ 25 տոկոս բաժնեմասի օտարմամբ,

գ) Հանձնաժողովը 2016 թվականի դեկտեմբերի 21-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2016 թվականի դեկտեմբերի 22-ի գրությամբ հայտնել է, որ Արսեն Ժորայի Սարգսյանը 25 տոկոս բաժնեմասի վաճառքը և ձեռքբերումը ընկերության մեկ այլ մասնակցի՝ Սպարտակ Անդրանիկի Սանթրոսյանի կողմից տեղի է ունեցել Օրենքի 27-րդ հոդվածի պահանջի խախտմամբ ,

ե) Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր, իսկ 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք նույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց Հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք նույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են հանձնաժողովին,

զ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերության մասնակից Արսեն Ժորայի Սարգսյանի 25 տոկոս բաժնեմասի վաճառքը 25 տոկոս բաժնեմասի սեփականատեր Սպարտակ Անդրանիկի Սանթրոսյանին և Սպարտակ Անդրանիկի Սանթրոսյանի կողմից այդ բաժնեմասի ձեռքբերումը տեղի է ունեցել առանց Հանձնաժողովին գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելու, ուստի խախտվել են Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները,

և հիմք ընդունելով Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ

հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Անապատ-1» փոքր հիդրո-էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №376Ա՝

   1) որոշման մեջ «2017 թվականի ապրիլի 1-ը» բառերը փոխարինել «2016 թվականի դեկտեմբերի 28-ը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ Ընկերության «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0560 լիցենզիայի պայմանների՝

   ա. 6-րդ կետում «ժամկետում» բառից հետո լրացնել «(ժամանակահատվածում)» բառով,

   բ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «9. «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3900 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով.

   1) հիդրոտուրբին №1 ՇՇ-120-Գ4-50, 1100 կՎտ, 2013թ,
   2) գեներատոր №1 ԱԳ-ДА30-2-16-У4 1250/1500, 1250 կՎտ, 1992թ,
   3) հիդրոտուրբին №2 ՇՇ-120-Գ4-40, 800 կՎտ, 2013թ,
   4) գեներատոր №2 ԱԳ-1000/1500, 1000 կՎտ, 2001թ,
   5) հիդրոտուրբին №3 ՇՇ-200-Գ5-75, 2000 կՎտ, 2014թ,
   6) գեներատոր №3 СДМ3-15-76-У3 2500/1000, 2500 կՎտ, 1991թ:»:

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2014 թվականի դեկտեմբերի 19-ի №3024/10/5 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №14-0041 երաշխիքի համաձայն ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

3. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 դեկտեմբերի 2016թ.
Ժամը 16[00]